ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

1

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի, հայ քերթության այդ անզուգական հուշարձանի գաղափարական բովանդակության արժեքավորման, մասնավորապես նրա սոցիալ-հասարակական հնչողությունը ճշգրտման առումով չափազանց հետաքրքրական է պարզել, թե պատմափիլիսոփայական ի՞նչ հայեցակետով, գեղագիտական ի՞նչ սկզբունքներով է մերձեցել բանաստեղծը ժամանակակից կյանքին, շրջապատող ֆեոդալական իրականությանը և ինչպիսին է պատկերացրել նա աշխարհի ապագան։ Կանխավ նկատենք, որ թեև «Նարեկը» գրեթե ամբողջությամբ աստծուն, նրա միածին որդուն, ինչպես և տիրամորը հասցեագրված աղոթամատույց խոսք է, բայց այդ երկի գլխավոր առանցքը մարդն է՝ իր բարդ, առեղծվածային ճակատագրով ու կեցությամբ, իր հարուստ հոգեկան ներաշխարհով, հույսերով ու հույզերով, իր սպասելիքներով ու հիասթափություններով, տարակույսներով ու տվայտանքներով, միով բանիվ այն ամենով, ինչը մարդկային էություն է անվանվում։ Միանգամայն ակներև է, որ մի այնպիսի վիթխարի զգայուն ստեղծագործական անհատականություն, որպիսին է Գրիգոր Նարեկացին, հազիվ թե բավարարվեր «ոսկ միայն մարդկային հոգու ներհայեցական քննությամբ, նրան չէր կարող չձգել իրական խայտաբղետ ու առինքնող աշխարհը, շրջապատող կենդանի, խայտացող իրականությունը, մարդու կենաց բընական միջավայրը կամ, քերթողի խոսքով ասած՝ «այսր կենցաղը»։ Այս առումով բացառիկ արժեք է ներկայացնում հատկապես «Ողբերգության մատյանի» մի միտքը, ուր ասես պատասխանելով իր առկա և ապագա (այդ թվում և մերօրյա) ընդդիմախոսներին, Նարեկացին գրել է.

> *...Ի նախնին իմ սովորութիւն,*
> *Յաղաւթարանն վայրի ընդ պատաղմունս այսր կենցաղոյս շրջանակեցայ...*
> *(բան Ի, զ)*[1]։

Միանգամայն աներկբա է Նարեկացու խոսքերի իմաստը՝ ինքն այնքա՞ն և այնպե՞ս է «շրջանակված» իրական կյանքի, «այսր կենցաղի» զբաղումներով, որ իր աղոթանոցում, մենության մեջ աստծու հետ մենախոսելիս, հաղորդակցվելիս անդամ չի կարողանում ազատվել այսրաշխարհային հոգսերից ու առօրյա կենաց շահագրգռություններից[2]։

---

1 «Մատյանից քաղվածքները մեջ ենք բերում ըստ հետևյալ գիտական հրատարակության՝- Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի. Երևան, 1985։

2 Ընդգծված տողը հենց այս իմաստով է վերծանել Գ. Ավետիքյանը, գրելով. «Ի տեղւոջ աղօթելոյ կամ աղօթից յաշխարհական զբաղմունս պատատեցայ». Նարեկ աղօթից. համառոտեւ գեղուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ տյժմ երկրորդ անգամ յաւելուածով. աշխատասիրութեամբ Նորին տեառն Հ. Գաբրիէլի Սւետիքեան աթոռակալ վարդապետի. Վենետիկ, 1826՝, էջ 93, ծան. № 11 (այսուհետև՝ Նարեկլուծ)։ Աննշան տարբերիչ երանգավորումներով՝

Հազիվ թե սխալվենք, եթե ասենք, որ Նարեկա վանականի վերոբերյալ միտքը որոշ առումով կարելի է ընկալել նաև որպես ինքնատեսակ գեղագիտական նախադրույթ, որը նպաստում է հասկանալու, թե ժամանակին ինչպես է ընկալել հայ Վերածնության հանճարեղ սկզբնավորողը արվեստի ու ռեալ իրականության (այսրաշխարհային կյանքի) կապն ու փոխհարաբերությունը։

Ժամանակի իրականության ծավալուն պատկերը, իհարկե, «Ողբերգության մատյանում» չկա, և նման խնդիր բնավ չի էլ դրել իր առջև բանաստեղծը։ Թվում է, թե այստեղ միանգամայն այլ է եղել Նարեկացու նպատակն ու գեղագիտական սկզբունքը, որը նա փայլուն կերպով իրացրել է այն հնարավորության սահմաններում, որ ընձեռում էր քնարական ժանրի ստեղծագործությունը։ Իրականության այս կամ այն բնորոշ կողմին անդրադառնալիս Նարեկացին հաճախ բավարարվել է սոսկ սակավաթիվ ու հպանցիկ, բայց արտահայտչական մեծ ուժով օժտված բնութագրություն-ստվերագծերով, որոնք հիմնականում կատարելության հասցված, իրոք, բանաձևի կերպ ունեցող փայլուն խտացումներ են և ամենայն խորությամբ են բացահայտում տվյալ երևույթի բուն էությունը, նրա առավել տիպական հատկանիշները՝ այս ճանապարհով ձեռք բերելով գեղարվեստական վիթխարի ընդհանրացման զորություն։

Ամենից առաջ ինքնին պարզ է, որ բանաստեղծն իր հումանիստական իդեալով ու բարոյաբանական հավատամքով պիտի բախվեր ֆեոդալական բարդ ու ներհակ իրականության հետ։ Եվ միանգամայն օրինաչափ է, որ մարդու և մարդկության ճակատագրով խորապես ապրող ու տրվող հումանիստ բանաստեղծի ուշադրությունն առաջին հերթին բևեռվում է դարաշրջանի կյանքի ստվերոտ կողմերի, մարդու կատարելագործմանը, աստվածային էությանը հասնելուն, նրան միաձուլվելուն խանգարող, մարդկային երջանկության ճանապարհն արգելակող երևույթների ու հանգամանքների վրա։ Նարեկացու բնկալումով մարդուն ճնշող ու բարոյալքող մի իրականություն է իր ժամանակի կյանքը, ուր այնքան անհամար են անարդարությունները, արատները ու չարիքները, որ թվում է, թե վերջնականապես խախտվել է աշխարհում աստծու սահմանած ներդաշնակությունը, չքացել են բարոյական արժեքների գնահատման բնական ու բանական չափանիշները, ցավալիորեն նահանջել է ճըշմարտությունը, մարդու առջև ամուր գոցվել են դեպի արդարությունն ու երանությունը տանող ուղիները. ուր ամենուրեք չարիքն է իշխում, «նվազել է արդարությունը», աճել են մեղքերը, պակասել է «իրաւանց կշիռը» և զորացել անիրավությունը, նվազել, հալվել է «բարիքների բերքը» և լեռնացել է մարդկանց «սխալմունքը». ուր վշտերով է պատած առաքինի երախտավորը, և մոլեգնական հրճվանքի մեջ են բանսարկուն ու չար սատանան... Եվ այս բոլորի հետևանքով խցանվել է մարդու «կենաց աղբյուրը»։ Իր խոհերի համար ընտրելով զարմանալի խոսուն պատկերներ ու համեմատություններ, երբեմն ամեն ինչ իր անձին վերագրելով ու իր անձից խոսելով, բայց ըստ էության աչքի առաջ ունենալով հանրության «այսր կենցաղի» հանգամանքները, քերթողը գրում է.

Արդարութիւնն իմ նուազեալ եւ խպառ ունայնացեալ,
Մեղանքն յայտնեցեալ եւ յաչտ առաւելեալ,
Չարիքն իմ մնացական, եւ ես՝ կորստական,
Իրաւանցն կշիռ պակառեալ, եւ անիրաւութիւնն իսկոյն զաւրացեալ,
Բարեացն բեր հալեալ, եւ սխալմունքն արձանացեալ,
Աւանդն կորուսեալ, եւ դատակնիքն այժմէն գտեալ,
Մահուն մուրհակ գծեալ, եւ աւետեացն կտակ եզծեալ,

Նույն կերպ են հասկացել Նարեկացու խոսքերի իմաստը նաև «Մատյանի» աշխարհաբար թարգմանիչները. «Աղոթած միջոցիս կենցաղական մտազրաղումներով գրավվեցա...» (Թորգոմ Գուշակյան), «Աղոթավայրին մեջ՝ այս կենցաղի զբաղումներով շրջանակվեցա...» (Գարեգին Տրապիզոնի), «Աղոթքիս պահին նույնիսկ այս կյանքից չկտրվեցի» (Վազգեն Գևորգյան) և այլն։

Բարեբարն տխրեցեալ, եւ բանսարկուն ուրախացեալ,
Հրեշտակաց զունդն թախծեալ, եւ սատանայ խնծղիւք պարեալ,
Վերնական զաւրքն ողբացեալ, եւ ստորնայինքն բերկրեցեալ,
Սպանողին մթեր լցեալ, եւ պահողին զանձն կապտեալ... (բան Դ, բ)։

Բանաստեղծը ժամանակի պատկերը լրացնում է նորանոր ստվերագծերով, ավելի ու ավելի ծավալելով կյանքի բացասական երևույթների ու նրանց կրողների շրջանակները։ Նարեկացուն մասնավորապես զբաղեցնում են «հոգւոց համայնից» ապականողները, պատուհասների գլխավորները՝

Կորձանիչն եւ հնազանդեալք իւր,
Բռնաւորն եւ յելուզակք իւր,
Գոռոզն եւ սպառազէնք իւր,
Աւազակապետն եւ գումարտակք իւր...
Արդ, այսոքիկ պետք են գլխաւորութեանց՝
Ապականողաց ոգւոց համայնից,
Դասեալք ընդ ինքեամբք նուաճութիւնք մասանց,
Իւրաքանչիւր որ ի սոցանէ՝ բիւրք բիւրուց եւ հազարք հազարաց,
Իսկ զհամայնիցս թիւ նա միայն զաւրէ իմանալ,
Որ զառ ի մէնչ չէութիւնն դրեալ՝
Իբր զէութիւն գործոց տեսանէ (բան Զ, դ, ե)։

Հատուկ ուշադրության է արժանի այն պարագան, որ այստեղ Նարեկացին վկայակոչում է ոչ այլ ոքի, քան հենց իրենց՝ սովորական մահկանացու «երկրածիններին», որոնք բոլորից լավ են ծանոթ մարդու տառապանքներին, քաջ գիտեն կյանքը և իրենց իսկ փորձով կարող են անձամբ հաստատել, որ իր, բանաստեղծի խոսքերը աշխարհում տիրող պատուհաս-չարիքների ու նրանց գլխավորների մասին ամենևին էլ ինքնահնար, մտացածին չեն («...Թե ոչ ընդունայն ինչ գրեցի...»), այլ ամբողջովին իսկություն են, և որ ինքը դեռ չի ասել ողջ ճշմարտությունը դրանց բոլորի մասին՝ ընթերցողին թողնելով քննախուզելու («իմաստասիրելու») գործը մնացածների վերաբերյալ.

Եւ արդ, եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ,
Եւ առ երեսս ոչ կերպարանեսցի,
Եւ կեղծաւորարար ոչ անհաւատեսցէ,
Եւ մարդ զինքն ծանիցէ,
Եւ հասարակաց բնութեամբ վարեսցի,
Եւ երկրածին զանձն դիտեսցէ,
Եւ ի չափ իւրում կանոնին կացցէ,
Իմասցի, ծանիցէ զնախաթիւ մասունս արկածիցդ վերադրելոց,
Թէ ոչ ընդունայն ինչ գրեցի
Եւ կամ զրնաւ իսկութիւնն սահմանեցի,
Որ ի մերս բնութեան պտուտկի ազգի ազգի վրիպականութիւն,
Այլ ի բիւրուցն արգասեաց չարեաց. չափ մի երեւեցուցի,
Զի նոքաւք եւ զայլսն իմաստասիրեսջիք,
Թէպէտ եւ ոչ բովանդակապէս (բան Զ, ե)։

Այսպիսին է, ահա, աշխարհը Նարեկացու ընկալումով։ Միանգամայն պարզ է, որ այս իրականությունը բնավ չէր ներդաշնակում ո՛չ բանաստեղծի քրիստոնեական համոզմունքներին և ո՛չ էլ առավելապես նրա հումանիստական իդեալին, փիլիսոփայական, սոցիալ-հասարակական և բարոյական սկզբունքներին։ Եվ ահա հանուն իր հումանիստական իդեալի, հանուն մարդու (և ողջ մարդկային ցեղի) փրկության գերագույն նպատակի, Նարեկացին շիկացած երկաթով խարանում, անարգանքի սյունին է գամում իրական կյանքի մերժելի բարքերն ու նրանց կրողներին, հասարակության ամենատարբեր խավերի բնորոշ արատները՝ չխնայելով անգամ իրեն այնքան սրտամոտ ու կարեկցանքի արժանի «ռամիկ ինքնագործին» ու մշակ-շինականին։ Հիրավի,

ո՞ւմ ասես, որ բանաստեղծի թվարկումներում չի հանդիպում ընթերցողը. այստեղ են «ծովակուր» ավազակն ու «ենենգավոր» զինվորը, «ստորնաքարշ» «բեմականն» ու «անկնդրուկ» քահանան, «աննուէր» «աւրինականն» ու «կամակոր» մատակարարը, «դողամիտ» հազարապետն ու «ենենգաւոր» խորհրդակիցը, «շուայտեալ» շահարարն ու «վատնիչ» վաճառականը, «արբեցող» պաշտոնյան ու «անաւրէն» «դիվանապետը», «թարմատար» թագավորը, «ոգեկործան կայսրն» ու «ակնառու» դատավորը և այլն, և այլն, որոնց պատճառով է, որ, ինչպես կարծում է բանաստեղծը, տակնուվրա է եղել, ասես գըլխիվայր է շուռ եկել աստծու ստեղծած գեղեցիկ աշխարհը, ուր այժմ՝

Չար անփոփոխ, բարեմասնութիւն սասանեալ
Անձն տարագիր, աւանդ վաճառեալ...
Աւազակ ծովակուր, զինուոր ենենգաւոր,
Մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ,
Մշակ հեղգացեալ, ագաթական անխրախոյս,
Բեմական ստորնաքարշ, քահանայ անկնդրուկ,
Աւրինական աննուէր, դպիր կշտամբեալ,
Իմաստակ խելագար, ճարտասան անճոռնի...
Մեծութիւն վատթարեալ, վայելչութիւն անշքեալ, կարողութիւն տկարացեալ...
Պատուիրանազանցութիւն յարակայ, սխալանք ինքնակամ,
Մատակարար կամակոր, խորհրդակից ենենգաւոր, բարեկամ հատուածեալ,
Հազարապետ գողամիտ, մերձաւոր կծծի,
Բաշխող ժլատ, վերատեսուչ կարկամ...
Վաճառական վատնիչ, շահարար շուայտեալ,
Պաշտաունեայ արբեցող, գանձուց ոստիկան երկմիտ,
Պատգամաւոր բանսարկու, դռնապան ջնէած.
Աղքատ հպարտ, մեծատուն ժխտող,
Դիւանապետ անաւրէն, պահապան մատնիչ, բնակակից չարախաւս...
Արքայ արտալած, թագաւոր թարմատար, կայսր ոգեկործան,
Իշխան տիրադաւ, զաւրավար զրկող,
Դատաւոր ակնառու, ռամիկ ինքնագործ... (բան ԾԶ, ա)։

Փոփոխելով շեշտադրությունը, բանաստեղծն իրականության պատկերը լրացնում է նոր հատկանիշներ բացահայտելով, նոր արատներ մատնանշելով.

Եթէ զինուոր տեսանեմ՝ մահու ակն ունիմ,
Եթէ պատգամաւոր՝ խստութեան,
Եթէ մատենադէտ՝ մուրհակի կորստեան,
Եթէ աւրինաւոր՝ անիծից,
Եթէ աւետարանական՝ փոշոյ ոտիցն թաւթափելոյ,
Եթէ բարեկրաւն՝ յանդիմանութեան... (բան ԻԳ, գ)[3]։

«Նարեկի» այս հատվածները, որոնք, ի դեպ, շատ հետաքրքրական են նաև բանաստեղծի պոետիկայի տեսակետից և վկայում են նրա՝ դիպուկ ու տարողունակ էպիտետ-բնութագրությունների հանճարեղ վարպետությունը, զարմանալիորեն ձայնակցում են ժամանակի պատմական սկզբնաղբյուրների տված վկայություններին։ Որպես օրինակ վերհիշենք Արիստակես Լաստիվերտցու մի վկայությունը. «...Արդարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղև արծաթասիրութիւն քան դաստուածասիրութիւն, և մամոնայ քան զՔրիստոս. յայնժամ ամենայն համեստութիւն կարդաց զառածեալ՝ յանկարգութիւն դարձաւ։ Իշխանք սորա (Արծն քաղաքի—Վ. Ն.) գողակիցք եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. դատաւորք սորա կաշառառուք և վասն

3 «Ողբերգության մատյանից» մեջ բերված այս և նախորդ հատվածի ճիշտ մեկնաբանությունը տվել է Մ. Մկրյանը։ Տե՛ս նրա՝ Գրիգոր Նարեկացի. Երևան, 1955, էջ 197—201։

կաշառոյ գոգանային զիրաւունս. դատաստան որբոց ոչ առնէին, և յիրաւունս այրեաց ո՞չ խոնարհէին։ Վաշխից և տոկոսեաց օրէնք եդան, և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուղ ի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան։ Որ խաբէր զընկերն՝ պարծէր ի մաստուն գոլ, և որ յափշտակէր՝ ասէր. Ես հզօր եմ։ Զտունս տնակից աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն...»[4]։

Նկատենք նաև, որ «Մատեան ողբերգութեան» պոեմից վերը մեջ բերված հատվածները թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ հյուսվածքի ոճով զարմանալի հիշեցնում են Քերթողահայր Մովսես Խորենացու «Ողբքը», այնքան, որ թվում է բավականաչափ հիմքեր են տալիս խոսելու եթե ոչ կրած ուղղակի ազդեցության, ապա գեթ մեր ազգային դպրության երկու խոշորագույն դեմքերի պատմափիլիսոփայական ընկալումների ու գեղագիտական սկզբունքների ապշեցուցիչ ընդհանրությունների ու նմանությունների մասին։ Համեմատության համար հարկ ենք համարում մեջ բերել «Ողբքից» մի քանի բնորոշ կտոր. «Վարդապետք տխմարք և ինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ. արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով. ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհնգութիւն, յորում Աստուած բնակէ, և զայլք եղեալ՝ զիւրեանց հօտս դիշատելով։ Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան թէ աստուածասէրք։ Վիճակաւորք հպարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգութեանց։ Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել... Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ։ Զօրականք անարիք, սնապարծք, զինատեացք, պղերգք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք... Իշխանք ապստամբք, գողակիցք գողոց, կծիք, կծծիք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւերք, աղտեղասէրք, ծառայիցն համամիտք։ Դատաւորք տմարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք։ Եւ բարձումն առ հասարակ յամենեցումց սիրոյ և ամօթոյ»[5]։

«Նարեկից» վերը բաղվածաբար մեջ բերված հատվածներում պարզորոշ դրսևորվել է նրա հանճարեղ հեղինակի ինքնատիպ քննադատական հայացքը ժամանակի իրականության առավել բնորոշ երևույթների նկատմամբ։ Այդ և նման տեղիները մի նոր կողմից են բնութագրում «Նարեկը», մեծապես բարձրացնում են այդ նշանավոր գրական հուշարձանի սոցիալ-հասարակական արժեքն ու հնչեղությունը։

Նարեկացու ընկալումով աշխարհում այնքան շատ են հասարակական չարիքներն ու արատները, անարդարությունները ու տառապանքները, որ բանաստեղծը, իր «մահվան մուրհակը» գրված համարելով, մեծագույն ցավ ու ափսոսանք է ապրում անգամ իր ծնվելու, լույս աշխարհ գալու առթիվ.

Եւ արդ, ո՞չ ապաքէն ըղձալի էր,
Ըստ Գրոյն կանխութեան նախաձայնելոյ,
Ո՛չ ստեղծանիլն երբէք յարգանդի
Եւ ո՞չ նկարիլն յորովայնի,
Ո՛չ ի ծնունդ յառաջագայիլ
Եւ ո՞չ ի լոյս կենաց հասանիլ,
Ո՛չ ի Քիւս մարդկան գրիլ
Եւ ո՞չ ի հասակ աճման ամբառնալ... (բան Դ, գ)։

---

4 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Ն. Յուղբաշյանի. Երևան, 1963, էջ 75։

5 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարությունեան. Տփղիս, 1913, էջ 363—364։

Աշխարհով մեկ տարածված հազարավոր, բյուրավոր ու այլազան անիրավությունները, անարդարությունները, չարիքներն ու արատներն են պատճառը, որ մարդ-արարածը չի կարողանում հասնել իր նվիրական իղձերի կատարմանը, չի գտնում բաղձալի երանությունն ու երջանկությունը։ Քերթողի ընկալումով ծայր աստիճան չկարգավորված, աններդաշնակ է աշխարհը, և թվում է, թե աշխարհի այս վիճակը և այն շտկելու անհնարինությունն է գուցե անուղղակի դատապարտում իր խաչը կրող քերթողը, երբ գրում է.

Ոչ յառեցի զակն ոգւոյս ի գլուխն իմ կենաց Քրիստոս,
Որով ընդ ուղիղն հետեւեցայց,
Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս,
Ցանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի,
Ի մեծագոյնն ամբառնալ՝ աստուստ գլորեցայ,
Ցերկնային ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ,
Ի զգուշանալն առաւել յաւէտ վնասեցայ,
Ցանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ,
Կարծելով ընդ ահեակն մրցիլ յաշն գթեցի... (բան ԾԵ, դ)։

Աշխարհում տառապող մարդու ողբերգական ճակատագիրն ու ապրումներն առավել ռելիեֆ ներկայացնելու նպատակով Նարեկացին կերտել է մեկը մյուսից ինքնատիպ ու տպավորիչ, մեկը մյուսից ազդու և խոսուն, հաճախ խիստ արտասովոր պատկերներ, որոնց շարքում իր արտահայտչական վիթխարի ուժով առանձնանում է հոգեբանական նուրբ դիտարկումներով հագեցված մրրկածուփ ծովում նավաբեկությունից խորտակվող նավին նմանվող իր տանջված ու բզկտված հոգու այլաբանական կենդանի պատկերը, բանաստեղծական արվեստի մի շլացուցիչ կտավ, որ առհասարակ հայ քերթության ամենափայլուն հայտնությունների շարքին կարելի է դասել.

Այն զի ծով է ինձ ծփանաց
Կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն,
Ցորում կոհակաւք բազմաւք անթիւ դիմեցմանց
Տատանեալ հոգիս ի յայսմ աշխարհի՝
Մարմնոյս շինուածով, իբր ի նաւակի։
Զոր ԵՍայիաս մարգարէ զյանկարծադէպ կատարածն,
Որ ի պարսկականն հինից,
Երուսաղեմի եւ Սամարիայ կործանմանն,
Նմանութեամբ այսր ալրինակի կերպաւորեցոյց,
Որ եւ առ իմս հոգեւորական խորտակումն զուգաձայնել ոչ է սխալական
(բան ԻԵ, ա)։

Սրան հետևում է նավի խորտակման անկրկնելի, իր տեսակի մեջ, իրոք, եզակի նկարագրությունը, որ հարկ ենք համարում ստորև մեջ բերել ամբողջությամբ.

Թեւոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ,
Կայմն ամբարձման ի կայից իւրոց խլեցաւ,
Առագաստին թռչարան յանկարկտելի ծուէնս պատառեցաւ,
Շինուածոյն շուք անզարգեցաւ ;
Առասանք ձգողականացն խզեցաւ,
Տեսարան գլխոյն դիտակի խոնարհեցաւ,
Ապաւանդակին պարան կտրեցաւ,
Ապաւինութիւն խարսխին լուծաւ,
Լուծք ստուարք ամոլիցն կցորդութեան բաժանեցան.
Սամիք ուղղչացն հետոց գալարեցան,
Լաստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ,

Ղեկացն կառուցմունք անդրէն սուզան,
Զուցն յարմարութիւնք պակասեցան,
Ողնափայտին պատստարան իսկոյն բեկաւ,
Կապարանք գստին հաստուածոյ յաւշատեցաւ,
Գոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան,
Խելք շրթանցն եզերաց խախտեալ ոստեաւ,
Պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ,
Վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ,
Գահատրակին հանգստարանն շփոթեցաւ,
Մածմունք տախտակաշարք ի միաբանութեանց միմեանց անշատեցան,
Հեղոյսք պնդման բեւեռացն քարշեցան (բան Իե, բ)[6]։

Հապա որքան կենդանի, նուրբ և հուզիչ է իր թշվառ վիճակը «ձեռն ի ծնաւտի եղեալ» աղեկտուր ողբացող, նավաբեկությունից խորտակված նավի (որ այլաբանորեն խորհրդանշում է բանաստեղծի հոգին) «նավուղիղի» (նավավարի) հոգեկան ծանր ապրումների իրապատում փայլուն նկարագիրը, որ, իրոք, վրձնելու արժանի մի հրաշալի պատկեր է.

Արդասիք իրին յիշատակարան ոգբոց ինձ նմանեցաւ։
Նաւուղիղն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ,
Ձեռն ի ծնաւտի եղեալ՝ արտասուաց գետս իջուցանէ,
Նշմարք սակաւ մնացուածոցն, ի ծայրից՝ ծփմանց ազդելոյ ծովուն,
Իրր խողխողեալ բանաւոր, ողորմագին թախծանաւք հեծէ։
Վասն դի թէ դրարի նաւապետն երկնաւորաւքն զաւրաւք յաշխարհիս ծովու
Առ ի գխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս
Առցէ աշխարել բանիս յարմարութիւն,
Ոչ ինչ վրիպեսցէ ի ստուգութենէ (բան Իե, գ)[7]։

Վերհիշելով «Ողբերգության մատյանի» նավաբեկության հատվածը, Գարեգին Տրապիզոնին նկատել է. «Ոչինչ այսքան մարդկային, բայց ոչինչ նաև այսքան աստվածային, առաջինը իր ջարդուփշուր նավի բեկորներով՝ «խառված ծովուն ալեծուփ կատարներուն վրա» տարուբեր, երկրորդը իր ճուզված գութով՝ ուսկից հծծող «ողորմագին թախծանքի» հեծքը ծեծկվող կոհակներու մռունչին հետ կը խառնվի քնարական ա՜յնքան սրտառուչ երաժշտությամբ»[8]։ Իրոք, բանաստեղծական բարձր արվեստի մի սքանչելի նմուշ է սա, յուրատիպ մի ընդհանրացում, ուր անդրադարձված է ոչ միայն իր՝ բանաստեղծի, այլև իր նման հազարավոր ու բյուրավոր տառապյալների անել կացությունը ֆեոդալական աշխարհի հեղձուցիչ մթնոլորտում։ Եվ այսուամենայնիվ դա քերթողին չի նետում հուսահատության գիրկը, չի վհատեցնում, անհույս ողբա-

---

6 Այս հատվածի առթիվ ուշագրավ մեկնաբանություն է տվել Նարեկացիագետ Պ. Խաչատրյանը, որի հավաստումով այս պատկերը «դրական որևէ սկզբնաղբյուր չունի»։ «Նավը կազմող մասերը,— գրում է հետազոտողը,— սրանց իրենահաջորդ խզումն ու բաժանումը, բեկումն ու գալարումը, պատառոտումն ու բայթայումը, ոստումն ու խոնարհումը, ընկղմումն ու սուզումը այնպիսի մանրակրկիտությամբ, ճշգրտությամբ և անկման տրամաբանական աստիճանավորումներով են պատկերված, որ Նարեկացու իմացությունն ու երևակայության ուժը դարմանք են պատճառում։ Բանաստեղծը թվում է նավի բաղկացուցիչներ, որոնք ճգնակյացի անձուկ խցի մեջ ամփոփված Նարեկա վանականը երբեք չէր կարող իմանալ։ Գեղարվեստական այդ անթերի նկարագրության հետ թերևս կարող է մրցել միայն սայլիկի պատկերը Նրա նշանավոր «Տաղ Յարութեան» երգում» (Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, էջ 1013, ծան. № 2)։

7 Տեքստում մեջբերված հատվածների մասին տե՛ս Նարեկլուծ, է, 116—118, ծան. №№6—25։ Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, էջ 1012—1014, ծան. №№ 2—8։

8 Նարեկ. Մատեան ողբերգութեան ս. Գրիգոր Նարեկացիի, գրաբար բնագրի հանդիպադրությամբ աշխարհաբարի վերածեց Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի. Պուենոս Այրես, 1949, էջ Ի։

սաց չի դարձնում նրան, և հենց իր երկի սկզբում Նարեկացին փաստորեն նախանշում է իր դիրքորոշումը՝ առհասարակ ապարդյուն ու անշահ նկատելով անընդհատ հեծեծանքն ու ողբը.

Իսկ արդ, զի՞նչ բարւոք դոյ առ այս,
Եւ կամ ո՞ր աւդուտ ինձ առ սոյն՝
Զայս սահման ընթացից ձայնիս հեծութեան լքանել,
Եւ ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս
Խարանաւ բանիս արտաքս հերքել... (բան Զ, ա)։

Որքան էլ քերթողը անիմաստ ու անշահաբեր է համարում հուսաբեկվելը, այնուամենայնիվ, նրա խոցված ու տառապած սիրտը վերստին մաշում, խռովում են անհամար տագնապներն ու տարակույսները—կողջանա՞ արդյոք իր հոգու փշրված նավը, իր համար կբացվի՞ արդյոք փրկության գոցված դուռը։ Եվ այդ հոգեմաշ տագնապներն ու տարակույսները, արտահայտման տարբեր ձևեր ընդունելով, անցնում են Նարեկացու «Ողբերգության մատյանի» ամբողջ ընթացքով։ Նկատենք, ի դեպ, որ այստեղ քերթողը ավելի հաճախ է դիմում հատկապես ճարտասանական հարցի հնարանքին, որը լավագույնս ներդաշնակում է նրա բազմաբարդ ու ներհակ խոհերին և որի շնորհիվ բացառիկ հուզական լիցք է ստանում բանաստեղծի խոսքը։ Ճարտասանական հարցերը հաջորդում են մեկը մյուսին, բուռն թափով կուտակվում միմյանց վրա՝ սոսաջ բերելով մտքի անկրկնելի խտացումներ, հույզերի վիթխարի շիկացում.

Արդ, իցե՞ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս
իմոյ նորոգեալ,
Իցե՞ արգեւք տեսանել դիշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ,
Իցե՞ արգեւք տեսանել զբաժանեցեալս միշոցաւ մեծաւ վերստին կցեալ,
Իցե՞ արգեւք տեսանել զյոգնաթախիծ սիրտ վշտացելոյս բերկոեցեալ։
Արդ, իցե՞ ակն ունել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան բնութեանս
կրկին հանդերձեալ...

Նորանոր երկմտանքներ, տարակույսներ են պաշարում քերթողին.

Եթէ լինիցի՞ խաւարասնունդս մթացելոյ ծագման առաւաւտ,
Եթէ հասցէ՞ տեսանել զտագնապեալս մշտասառոյց յեղանակս գարնանն մատ,
Եթէ տեսի՞ց զցաւդ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոց ինձ արաւտ,
Եթէ իցե՞ երբէք նկատել զզազանաբեկ հերքելի ոչխարս վերստին կամաց
գթութեան քո հաւտ (բան Իե, դ)։

Բայց որքան էլ անափ ու անշափ են թվում կյանքի չարիքներն ու դառնությունները և դրանցից ծնված մարդկային տառապանքները, որքան էլ խորն են բանաստեղծի տարակույսները, որչափ էլ ամուր է փակված փրկության դուռը, այնուամենայնիվ հումանիստական իդեալի մեծ նվիրյալը իսպառ չի կորցնում գալիքի հեռանկարն ու փրկագործվելու ակնկալիքը, ձեռքից բաց չի թողնում փրկության օղակը, և խորապես հավատում է, որ վերջիվերջո մարդու համար պահված է «անշոյլ յիշատակի փրկութեան յուսոյ...»։ Ահա Նարեկացու «Ողբերգության մատյանի» մեծ խորհուրդը։

Զարմանամ, թէ զի՞արդ ոչ կիզում,
Հիանամ, թէ ի՞բր ոչ այրիմ,
Ապշիմ, թէ ո՞րպէս ոչ յափշտակիմ՝
Տանջեալ, լքեալ, շարշարեալ, շաղխեալ,
Մանրեալ, խորտակեալ, կտրեալ, բաժանեալ։
Ի յաւրինակէ ժանեաց կորուսչին, ըստ Գրոյն։

Այլ այս միայն է ողջաճեղեալ ինձ
Նշոյլ յիշատակի փրկութեան յուսոյ... *(բան ԼԳ, գ)։*

«Փրկության հույսի» այս լուսավոր շողն էլ հենց պայմանավորում է «Ողբերգության մատյանի» ինքնատիպ լավատեսական շունչը, նրա վիթխարի հոգեպարար ամոքիչ ոգին, որին դարեր շարունակ ապավինել, որով գերվել է մի ամբողջ ազգ։ (Հիշենք, որ հայոց մեջ «Նարեկն» իր պաշտամունքով, ըստ էության չի զիջել անգամ Ս. Գրքին)։

Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու փրկության գաղափարին ողջովին ապավինած քերթողը իր մատյանը համարել է ոչ թե ողբի և հուսալքումի, այլ՝ փրկության հույսի ու հավատի գիրք, յուրատեսակ «կենաց դեղ» աշխարհում տառապող բոլոր տագնապյալների ու նեղյալների համար, նրանց պատվիրելով՝

Եթէ վտանգ մահու անձնական ցաւոց զոք պաշարեսցէ,
Գտցէ՛ փրկութիւն սովաւ առ ի յոյս կենաց՝
Յաղթելն առ քեզ, կեցուցիչ։
Եթէ տագնապաւ որ տարակուսի ի սիրտ խոցիցի,
Քաղցրութեամբ քո սովաւ ապրեալ ողջասցի՛...
Եթէ պաշտպանակն վստահութեան զանձն ուրուք լքցէ,
Ընկալցի՛ այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝
Ամփոփեալ ի նոյն հաստատութիւն։
Եթէ ամայի ի զգուշութենէ պահողացն ոք դեգերեսցի,
Սպասեսցէ՛ սովիմբ առ ի նոյն դարձ նորոգողիդ։
Եթէ սարսուռ դիւային չերման դողութեամբ ինչ զոք խռովեսցէ,
Սթափեսցի՛ ի սոյն յայս նշան... (բան Գ, գ)։

Վերհիշենք նաև իր «Ողբերգության մատյանին» վերաբերող աղերսն առ «Լականութիւն անկասելի» աստծուն.

Եւ արասցես յինէն դեղ կենաց
Առ հնարս ցաւոց հոգւոց եւ մարմնոց քոց ստեղծուածոց,
Զայս կարդեալ սահման ողբոց մատենի՝
Սկզբնեցելոյ յանուն քո, բարձրեալ (բան Գ, ե)։

Նարեկացու քերթվածի լավատեսական ոգին ժամանակին նշմարել ու ընդգծել է Միսաք Մեծարենցը՝ հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության լավագույն մեկնաբանը. «...Բայց բոլոր այս խավարներուն ու մշուշներուն, ծփծփումներուն ու հործանքներուն ետին,— գրել է նա,— հավիտենական երջանիկ, անշիջանելի գաղափարը կա պահված. և կու գա կամքի ու գիտակցության արևոտ այն վայրկյանն ալ՝ ուր երջանիկ ձայնարկությունը կլսվի. «Տօնեա. զկնալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբս։ Եվ այս վայրկյա՞նը...»[9]։

Զկարգավորված, աններդաշնակ ու դաժան իրականությանը, կյանքի անբավ չարիքներին ու դառնություններին Նարեկացին հակադրել է իր «Մատյանի» սփոփող ու ամոքիչ ոգին և հուսադրիչ էությունը, որի՝ Միսաք Մեծարենցի տված խորապես ճշմարտացի բնութագրությանը միացել են այլ նարեկացիագետներ ևս, որոնց շարքում հարկ կհամարեինք առանձնացնել հատկապես «Նարեկի» աշխարհաբար թարգմանիչ Գարեգին Տրապիզոնիին, որը ըստ ամենայնի թափանցելով այդ խորախորհուրդ ստեղծագործության նվիրական գաղտնիքների մեջ, այն հաստատ եզրակացությանն է եկել, որ «...սխա՜լ է դարձյալ... խորհիլ, թե Նարեկացիի Ողբերգությունը անբուժելի

9 Միսաք Մեծարենց. Երկերի լիակատար ժողովածու. Երևան, 1981, էջ 270։

հոռետեսության հիվանդագին շունչով է թաթախված...», «Ո՛չ,— պնդում է գիտնականը,— Նարեկացին հրաշալի լավատես մրն է, քաջ սպառազինված մարտիկ մը իր կովին մեջ՝ հաղթանակին հավատքովն ապահով... Առանց այս առողջ լավատեսության՝ իր քնարը պիտի չտար մեզի իր Ողբերգությունը: Ան ծնունդ է ոչ թե պարտության, այլ հաղթության ոգիին»—ահա Տբապիզոնիի աներեր համոզմունքը[10]։ Հազիվ թե վիճելի համարվի հմուտ Նարեկացիագետի փոքր-ինչ զգացումնային, բայց իր հիմքով ճշմարտացի այս եզրահանգումը։

Ինքնին հասկանալի է և հատուկ ապացուցման կարիք չունի այն, որ Նարեկացու չբավարարվածությունը ժամանակակից իրականությունից, առավել ևս նրա քննադատական վերաբերմունքը այդ իրականության նկատմամբ, բնավ չի կարելի գնահատել որպես ապացույց քերթողի «աշխարհամերժ» մտայնության։ Նման գաղափարը խորթ է Նարեկացու համար։ Քննադատելով ժամանակակից իրականության խոտելի կողմերը, բանաստեղծը ձգտում է հասնել դրանց վերացմանը, կյանքի այնպիսի պայմանների ստեղծմանը, ուր աստծու ստեղծած մարդը կարողանա արժանանալ իր նվիրական բաղձանքների իրականացմանը։ Կարող ենք ասել, որ իրականության նկատմամբ քննադատական վերաբերմունքով բանաստեղծը մեկ այլ կողմից է վավերացնում իրական կյանքի նկատմամբ մարդու իրավունքի հաստատման խորապես մարդկային ձգտումը, որը, ինչպես ցույց ենք տվել, հանդիսանում է մահն իրենից վճռաբար վանող և կյանքին ամուր կառչած բանաստեղծի աշխարհայեցողության մի կարևոր մտադրությը[11]։

Իրականության ընկալման Նարեկացու պատմափիլիսոփայական ելակետների ու գեղարվեստական արտացոլման սկզբունքների հարցը քննելիս հարկ է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա ևս։ Նկատենք, որ բանաստեղծի տաղերի ուշադիր քննությունը ի հայտ է բերում քերթողի աշխարհընկալման մի կարևոր կողմը։ Քնարական այդ անզուգական քերթվածների բանաստեղծական այլաբանական պատկերների մեջ, հիրավի, ցոլանում է մի զարմանալի զվարթ հայացք, յուրատիպ մի հիացք իրական աշխարհի (ուշ միջնադարի հայ տաղերգակի բնորոշումով՝ այդ «ուրախարար տեղի») նկատմամբ։ «Ողբերգության մատյանում» նույն իրողությունը բացահայտվում է մի նոր կողմից։ Թեև պոեմում, ինչպես տեսանք, բավական շեշտված են իրականության արատները ու մերժելի կողմերը, բայց պետք է ասել, որ Նարեկացուն միանգամայն օտար է իրական կյանքի ընկալման միագիծ ու միանշանակ մոտեցումը։ Կյանքը բանաստեղծն ընկալում է փիլիսոփայական շատ ավելի լայն հայացքով՝ քան մինչև հիմա մենք հասկացել ենք։ Իրական աշխարհը նրա դիտումով ոչ միայն վատի, չարի, արատավորի համակ թագավորություն է (այլապես, իրավ, անիմաստ կլիներ Նարեկացու՝ կյանքի նկատմամբ մարդու իրավունքի հաստատման համառ ձգտումը), այլ աստծու ստեղծած կյանքն ու աշխարհը բանաստեղծին ներկայանում են որպես ներհակ վիճակների, լույսի ու ստվերի, խայտաբղետ, տարատեսակ ու իրարամերժ երևույթների և հատկությունների բովանդակալից, հարուստ ու զարմանահրաշ մի ամբողջություն, որի մասին նա գրում է.

Ցորս է տեսանել ի մէջ արշնատես ագռաւուց՝ սպիտականիշ երամս ազաւնեաց,
Ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոչս հանդարտաբարս,
Ի թիւս շանց գազանականաց՝ գառինս նուիրելիս,
Հեզութիւն՝ ի խստութեան, կատարելութիւն՝ ի թերութեան,
Խոնարհութիւն՝ յամբարհաւաճութեան, ճշմարտութիւն՝ ի ստութեան,
Միամտութիւն՝ ի մանկութեան, անբծութիւն՝ յայլամտութեան,
Բարաւութիւն՝ ի չարութեան, պարկեշտութիւն՝ ի լկտութեան,

10 «Նարեկի» Գարեգին Տբապիզոնիի աշխարհաբար թարգմանության առաջաբանը, էջ ԼԳ (ընդգծումները մերն են—Վ. Ն.)։

11 Տե՛ս մեր «Մարդու ճակատագրի Նարեկացու ընկալումը» հոդվածը. «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 16—26։

Ողորմութիւն՝ յանգթութեան, ապաշաւանք՝ յանյուսութեան,
Քաջութիւն՝ ի բարկութեան, հաշտութիւն՝ ի թշնամութեան,
Անոխութիւն՝ ի խածանողութեան, քաջալերութիւն՝ ի լկութեան,
Աւրհնութիւն՝ ի նեղտածութեան (բան ԼԱ, դ)։

Նարեկացու ընկալումով այսպիսին է, ահա, աշխարհն ու կյանքը՝ ներհակ ու վանող, բայց և դրավիչ ու առինքնող, ուր վատից, արատավորից, մերժելիից դատ, վշտից ու տառապանքից բացի կա նաև մարդուն ուրախություն ու երջանկություն բերող լավը, բարին, լուսավորն ու գեղեցիկը։ Այս հայեցակետը չափազանց կարևոր է Նարեկացու կենսափիլիսոփայությունը բազմակողմանիորեն բնութագրելու, բանաստեղծին և առհասարակ մարդուն կյանքի հետ կապող հանգույցների ներքին զսպանակները բացահայտելու առումով։

Այստեղ հարկ ենք համարում նշելու, որ, ըստ բանաստեղծի, որքան էլ իրական աշխարհում շատ են չարիքները ու տառապանքները, այնուամենայնիվ նա խորապես հավատում է լավի, բարու և գեղեցիկի հաղթանակին, որի լավագույն վկայությունն է դարձյալ «Մատյանի»՝ լույսով ու հույսով ողողված ավարտը, ուր, իրոք, տաք բաղձանքի հետ միասին կա ինքնօրինակ հավատի հստակ գիտակցությունը։ Միսաք Մեծարենցի նշած «երջանիկ ձայնարկությունն», իրոք, լսվում է պոեմի վերջին գլխում, ողջ քերթվածի լուսաոատ ավարտի մեջ, որ սկզբունքային նշանակություն ունի «Ողբերգության մատյանի» գաղափարական բովանդակությունն ու բանաստեղծի գլխավոր միտումը ըստ ամենայնի հասկանալու համար։ Հանդարտված է արդեն բանաստեղծի խռովահույզ հոգին, խաղաղված են ծովացած կրքերը, մեղմացած, նույնիսկ ցրված են տարակույսները, հույսի ու «արդար արեգակի» պայծառ շողերով են ողողված աշխարհն ու իրերը, ետ է քաշվել քերթողի հոգին պայքարող նախկին թանձր մառը... Եվ ընթերցողն այն զգացումն է ապրում, որ եթե նույնիսկ դեռ վրա չի հասել փրկության ժամը, ապա բնավ հեռու էլ չէ այն։ Այս մտայնությունը յուրովի անդրադարձվել է հենց պոեմի ավարտական գլխի սկզբում (բան ՂԵ, ա), որը, ի դեպ, առանձին վերցրած «լուսոյ տեսութիւն», «լուսոյ կերպարան», «բարւոյ բերկրութիւն», «ամենեւին կենաց աւրհնութիւն» Հիսուս Քրիստոսին նվիրված մի սքանչելի ներբող է՝ գրված Հայոց հին հոգևոր երգի լավագույն ավանդներով և որը շնչում է միջնադարի մարդու համար բնորոշ ջերմ հավատով ու հույսով.

Արեգակն արդար, ճառագայթ աւրհնեալ,
Լուսոյ կերպարան, փափագ անձկութեան,
Բարձրեալ անքնին, զաւրեղ անպատում,
Բարւոյ բերկրութիւն, լուսոյ տեսութիւն,
Գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց,
Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք... (բան ՂԵ, ա)։

Հենց այս յուրատեսակ լուսեղեն հույսով էլ ընթերցողը փակում է անբավ հեծեծանքներով լի, բայց փրկության հաստատուն խարսխին հենված մեծ քերթողի «Ողբերգության մատյանը», աշխարհի բոլոր նեղյալների ու տառապյալների հոգեկան ու մարմնական ցավերն ամոքող հռչակավոր «Նարեկը»...

2

Ինչպես անցյալի ամեն մի նշանավոր ստեղծագործողի ու մտածողի, այնպես էլ հայ Վերածնության խոշորագույն ներկայացուցիչ Գրիգոր Նարեկացու փիլիսոփայական աշխարհայեցությանը հատկանշական է խորապես գիտակցված ակտիվ քննական վերաբերմունքը ոչ միայն ժամանակակից իրականության, այլև գալիքի հեռանկարի, ապագա կյանքի ու նրա կարևոր խնդիրների նկատմամբ։ Անտարակույս է, որ նաև այս հանգամանքով է պայմանավորված Նարեկացու քերթողական ժառանգության դարակազմիկ արժեքը ինչպես ազ-

գային գեղարվեստական մտածողության զարգացման առումով, այնպես էլ առհասարակ միջին դարերի ողջ հայ մտավոր կյանքի առաջընթացի հիմնական միտումների և օրինաչափությունների բնութագրման տեսակետից։

Վերը մենք արդեն տեսանք, թե ինչպես ըստ էության շրջանցելով կամ մերժելով ժամանակի համար բնորոշ, քրիստոնեական վարդապետության պարտադրած պասսիվ հայեցողականությունը (դոգմատիկ մի հայեցողություն, որի հիմքը, անկասկած, նույն վարդապետության դավանած հնազանդության ու համակերպության մտայնությունն էր), Նարեկացին ժամանակի չկարգավորված, աններդաշնակ, իր ընկալումով՝ փաստորեն հակաբնական ու հակաբանական իրականության կնճռոտ ու ներհակ երևույթներին մերձեցել է ինքնահատուկ քննական հայացքով՝ աշխատելով խորամուխ լինել դրանց բուն էության մեջ, կռահել կյանքի խիստ անտրամաբանական իրողությունների իրական պատճառները։ Բայց այստեղ առանձնապես ուշագրավ է այն, որ աշխարհն ու կյանքը իր հումանիստական իդեալի բարձունքից ու մարդկության ապագայի հայեցակետից քննող ու գնահատող քերթողը չի բավարարվել իրականության բացասական կողմերը մատնանիշ անելով ու դատապարտելով միայն (թեև այդ էլ միանգամայն բավական էր նշանավոր ստեղծագործող հորջորջվելու համար), այլև, ինչպես հաստատում է փաստերի անկողմնակալ քննությունը, առաջադրել ու բավականին հետևողականորեն պաշտպանել է իր միանգամայն որոշակի իդեալը աշխարհի ու նրա ապագայի մասին, որը, եթե մի կողմից սերտորեն աղերսվում է քրիստոնեության հայտնի սկզբունքներին, ապա մյուս կողմից խարսխված է բանաստեղծի սոցիալ-հասարակական առաջադեմ մտայնության, ավելի կոնկրետ՝ նրա հումանիստական աշխարհայեցողության ամուր հիմքի վրա։

Արդ, տեսնենք, թե ինչպիսի՞ն է Նարեկացու պատկերացրած ապագա աշխարհը, ո՞րն է նրա իդեալը։ Բանաստեղծն այս առթիվ, իհարկե, որևէ ամբողջական, տեսականորեն հիմնավորված դրույթ չի թողել և միանգամայն հասկանալի է, որ խիստ անարդար ու անբնական բան կլիներ նրան նման պահանջ առաջադրելը։ Քերթողն իր գաղափարներն արտահայտել է պոեմի տարբեր հատվածներում ցրված քնարական գեղեցիկ ու տպավորիչ խոհերի միջոցով, որոնց ներքին կապերի բացահայտումը հնարավորություն է ընձեռում հաստատորեն պնդելու, որ աշխարհի չկանոնարկված, աններդաշնակ վիճակից խորապես դժգոհ բանաստեղծը կանգ չի առել կես ճանապարհին, լրջորեն խորհել է մարդու և մարդկության ապագայի մասին՝ առաջ քաշելով աշխարհի բարեփոխման գաղափարը, երազել է մի իրականություն, որ զերծ պետք է լինի ամեն կարգի չարիքներից ու կապանքներից, արատներից ու բռնություններից։ Նարեկացու իդեալը եղել է մի աշխարհ, ուր համակ պիտի թագավորի, ինչպես կարծում է նա, միայն արդարն ու բարին, ճշմարիտն ու գեղեցիկը։ Այստեղ անպայման պետք է հիշել, սակայն, որ բանաստեղծն իր ժամանակի ծնունդն էր և ժամանակակիցների հետ պիտի խոսեր նրանց միանգամայն հասկանալի լեզվով և, բնականաբար, հաշվի նստելով միջնադարյան մարդու ինքնահատուկ ըմբռնումների ու պատկերացումների հետ (որոնց հետ ինքը, Նարեկացին ևս, պիտի կարծել, միանգամայն ներդաշն էր), աշխարհի մասին իր խորապես հումանիստական իդեալի իրականացումը պիտի կապեր աստվածային զորության, աստծու ողորմածության ու մարդասիրության հետ։ Հիշենք, որ այն դարերում այսպես էին մտածում անգամ համողված ու հետևողական աղանդավորները, ինչպես, ասենք, թոնդրակյանները, որոնք ևս իրենց իդեալների ու ձգտումների կատարման համար ուղղակի ապավինում էին աստծուն, առանց եկեղեցու միջնորդությունը հայցելու։ Այն գարում պատմականորեն այսպես պիտի լիներ, այլ կերպ լինել չէր կարող, բայց դրանից բնավ չի փոխվում հարցի էությունը, չի ստվերվում Նարեկացու խորապես հումանիստական իդեալի բուն բովանդակությունը։

Աշխարհը բարեշրջված տեսնելու մեծ երազանքն ու ձգտումը («Դաբձցի՛ն ձմերունք հողմոյն խստութեան ի յաւդ հանդարտութեան...», բան ԼԲ, դ) այլևայլ ձևակերպումներով արձագանք են գտել «Ողբերգության մատյանի»

տարբեր գլուխներում՝ հաճախ զուգակցվելով աստծու կամ. նրա միածին որդու ջերմեռանդ փառաբանությանը, որ միանգամայն հասկանալի է, քանզի նրանց ձեռքով պիտի իրականանա այդ բաղձալի բարեշրջումը, ինչպես կարծում է բանաստեղծը։

Աշխարհի բարեշրջման, այն արմատապես բարեփոխված տեսնելու գաղափարի մեծ զինվորյալը յուրօրինակ մի «երկրային դրախտ» ստեղծելու համար ձգտում է հանդես բերում, գտնելով, որ այնտեղ իսպառ պիտի վերացվեն աշխարհն ապականող, մարդու էությունը խաթարող, մարդկային երջանկության ուղին խոչընդոտող, «կենագործվելուս», իրական կյանքն ամբողջությամբ ոմբոշխնելու բոլոր արգելքները։ Ընդ որում, քերթողն այստեղ նկատի ունի ինչպես սոցիալ-հասարակական, այնպես էլ բարոյահոգեբանական բնույթի հանգամանքները։ Նարեկացու երազած աշխարհում ասպարեզից «հերքեալ եւ հալածեալ» պիտի չքանա «բանսարկուն չարեացս», պիտի «ջրեսցին մեղքն, պատառեսցին պարտիքն», «խղին կապանք, խորտակին շղթայք», «հալածին գեր, ընջին յանցանք», պիտի ապաքինություն գտնեն բոլոր հիվանդներն ու տկարները, «ողջանան վէրք», անգամ՝ «կենդանածնին մահացեալք», պիտի վերացվեն «ապականութիւնք», թախիծը պիտի ընկրկի, պիտի «նահանջին հեծութիւնք», «լուծցին որոգայթքն գաղտնածածուկք սատանայականք», մերկանան չարի խարդավանքները, «գացին նենգողին ծուղակք», «նզովեսցին բռնաւորին չարաբանութիւնք», «կտրեսցին լար խաբեութեան ի մահ որսողին», «անկցին սուսեր մահաբերին», «բաժանեսցին ազինք աւազակացն», պիտի «փարատի մռայլն», «վերանայ մութն, գնայ գիշերն», և այլն, և այլն... Բանաստեղծը մեծ կրքով տենչում է. «Եւ եղիցի՛ նշոյլ առաւաւտու հոգւոյ գարնայնոյ»[12]։

Հարկ ենք համարում ստորև «Մատեան ողբերգութեան» պոեմի տարբեր գլուխներից քաղվածաբար մեջ բերել մեզ հետաքրքրող հարցին վերաբերող առավել բնորոշ հատվածները, որոնք, իսկապես, այնքան պարզ ու ինքնախոս են, այնպիսի անմիջականությամբ են բացահայտում հեղինակի նվիրական բաղձանքները, նրա խոհերի ու զգացմունքների բուն էությունը, որ թրվում է, թե միանգամայն ավելորդ են դառնում այլ պարագաներում այնպես անհրաժեշտ մեկնաբանությունները.

Եւ յայսքանեաց ամենից բիւրուց բարութեանցս ի քէն եղելոց
Մեծասցի՛ անուն հզաւրիդ՝ խնկեալ եւ խոստովանեալ,
Ամաչեսցէ՛ բանսարկուն չարեաց՝ ճերճեալ եւ հալածեալ,
Ունայնասցի՛ն մուրհակք մեղացս,
Եզեսցի՛ն խաղրքն, որոշեսցի՛ն որոգայթքն.
Կապտեսցի՛ն կապանքն, վանեսցի՛ վիճն,
Վերտսցի՛ն վնասքն, պարսեսցի՛ն պատրանքն,
Ջրեսցի՛ն մեղքն, պատառեսցի՛ն պարտիքն,
Խորտակեսցի՛ լուծն, քակտեսցի՛ն ճեղիքն։

Վանական բանաստեղծը երազում է.

Եւ ընդ մռայլ մթութեան չարեացն յանցանաց
Եւ դիւացն բանակաց պաշարողաց՝
Արև՛ւ փառաց քոց ժամանեսցէ՝
Կեցուցանել, փրկել եւ լուսաւորել

12 Այստեղ պետք է նշել, որ իր խոհերը շարադրելով բանաստեղծը երբեմն խոսում է իր անձի անունից, ինչպես, ասենք, «ունայնասցին մուրհակք մեղացս», «բարձցին վրտանգք մեղուցեալ դատապարտելոյս» և այլն, բայց տարակույսից վեր է, որ ինչպես առհասարակ այլուր, այնպես էլ սույն պարագայում նրա խոսքը վերաբերում է հանուրին, քերթողն արտարձակում է հանրությանը վերաբերող խնդիրներ։

Յաշմէ եւ յահեկէ, ի դիմաց եւ ի թիկանց,
Եւ եղիցի՛ նշոյլ առաւաւտու ճոգւոյ գարնայնոյ՝
Ընդ ակնկալութեան սպասողացն քումդ երեւման։
Զի դու ես բարերար առ ամենեսին,
Եւ հնարաւոր են քեզ ամենայնք,
Եւ ամենեցուն զկեալն կամիս եւ զփրկութիւնն բաղձաս (բան ԼԹ, ե)։

Հիշենք և Հիսուսին հասցեագրված աղերսանքը.

Որդի աստուծոյ կենդանւոյ, աւրհնեալ յամենայնի,
Հաւրդ ահաւորի անքնին ծնունդ,
Որ տկարանայ առ ի քէն եւ ոչ ինչ,
Որ ի ծագել անստուեր նշողից ողորմութեան քո փառաց
Հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք,
Լուծին կապանք, խորտակին շղթայք,
Կենդանանան մեռեալք, բժշկին հարուածք,
Ողջանան վէրք, բառնին ապականութիւնք,
Տեղի տան տխրութիւնք, նահանջին նեղութիւնք,
Փախնու խաւարն, մեկնի մէգն,
Մերժի մառախուղն, փարատի մոյլն,
Սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն,
Տառապի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն,
Եւ բարձրանայ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի *(բան ԽԱ, ա)։*

Ավելորդ չենք համարում մեջ բերել բանաստեղծի կարևոր մտորումների մի շարք ևս, որոնք վերաբերելով աշխարհի ապագայի նույն մտադրույթին, թվում է, թե նպաստում են ավելի ամբողջական ձևով բացահայտելու Նարեկացու հումանիստական մեծ գաղափարի տարբեր ասպեկտները։

Եւ յայսմ անպարտ եւ անպատիր
Եւ անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան՝
Լուծցի՛ն որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք,
Կապտեսցի՛ն մեքենայքն, վատնեսցի՛ն գայթակղութիւնքն,
Խայտառակեսցի՛ն խաղբիցն դրութիւնք,
Յայտնեսցի՛ն երեւոյթք որսոյն,
Գտցի՛ն ննջողին ծուղակք,
Վերասցի՛ն վարմին վերարկուք,
Տոչորեսցի՛ն որոմանցն բոյսք,
Նզովեսցի՛ն բռնաւորին չարաբանութիւնք,
Կտրեսցի՛ լար խաբէութեան ի մահ որսողին,
Պատռեսցի՛ն պատրողին բանսարկութիւնք,
Պակասեսցի՛ն զէնք զրպարտողին,
Անկցի՛ն սուսերք մահաբերին...
Ռամանեսցի՛ն ազինք աւաղակացն,
Քայքայեսցի՛ն բոյլք բարբարոսացն...[13]
Փշրեսցի՛ն ամբարհաւաճութիւնք հպարտացելոցն,
Նահանջեսցի՛ն դիմեցմունք ճակատելոցն,
Քակտեսցի՛ն միաբանութիւնք զաւրացն Բելիարայ...
Յեղանակեսցի՛ն ձմերունք ձանձրացուցչին,
Հատցի՛ կապն կցորդութեան մշտաշան աւազակին,

---

13 *Թվում է, որ Նարեկացին այս տողերով ուղղակի ակնարկում է օտարի լծից ու ավազակային հարձակումներից դարեր շարունակ տուժող ու տառապող իր տարաբախտ ժողովրդի ծանր ճակատագիրը, միաժամանակ փայփայելով այն փոխված տեսնելու անմար հույսը։*

Նողկասցի՛ մտացս կայից համբոյր շողոքորթին,
Բնդմիջեալ մեկնեսցի՛ն նետաձգութիւնք նեղչին,
Կասցե՛ ի սասանման նաւ խարդախողին,
Ելեսցի՛ն յարմատոց անտի ատամունք խածանողին (բան Ղ, դ)։

Կարևոր խորհուրդ ունի, անշուշտ, այն պարագան, որ ողջ պոեմի ընթացքում մշտապես իր ուշադրության կենտրոնում պահելով կյանքն ու աշխարհը բարեշրջված, ամեն կարգի արատներից, կեղծիքներից ու խարդավանքներից, անիրավություններից ու անարդարություններից զերծված տեսնելու գաղափարը, բանաստեղծը դրան վերստին անդրադառնում է պոեմի ավարտական, ՂԶ գլխում, որով, ասես, մեկ անգամ ևս հատուկ շեշտում, հավաստում է գաղափարի հույժ կարևորությունը, կրկին ընդգծում նրա նշանակությունը իր «Ողբերգության մատյանի» փիլիսոփայական, սոցիալ-հասարակական բովանդակության տեսակետից։

Եւ վասն արեանդ պատուականի՝
Միշտ մատուցելոյ ի հաճութիւն կամաց առաքչիդ,
Բարձցի՛ն վտանգք մեղուցեալ դատապարտելոյս,
Թողցի՛ն պարտիքն, ապաքինեսցի՛ ամաւթն,
Մոռասցի՛ն պատկառանքն, բարեգործեսցի՛ն դատակնիքն,
Սատակեսցի՛ն որդունքն, վերասցի՛ լալն,
Հանդարտեսցէ՛ կրճումն ատամանցն,
Սպառեսցի՛ն ողբքն, հատցի՛ն արտասուքն,
Մերժեսցի՛ սուգն, հալածեսցի՛ խաւարն,
Վատնեսցի՛ հուրն սաստկութեան,
Հերքեսցի՛ն տանջանարանքն բազմաւրինակք (բան ՂԶ, բ)։

Բանաստեղծի շուրթերից նույն լուսավոր բաղձանքներն ենք լսում «Մատյանի» վերջին գլխի ավարտական հատվածում.

Եկեսցե՛ն գթութիւնք կամողիդ,
Եւ պարգեւողիդ կենաց ամենից,
Ծագեսցի՛ լոյսդ, արագեսցէ՛ փրկութիւնդ,
Հասցէ՛ աւգնութիւնդ, ժամանեսցէ՛ այցելութիւնդ,
Կանխեսցէ՛ ցաւղդ ողորմութեան,
Յառաջեսցէ՛, արբուսցէ՛ ղանդաստանս պասքեալ՝
Անկեալ ոսկերացս թշուառութեամբ ի վիհն մահու։
Ծաղկեցուսցէ՛, պտղաբերեսցէ՛
Բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ
Ջերկիրս խնամեալ աւուրն լուսոյ... (բան ՂԶ, գ)։

Աշխարհի և մարդու ու մարդկության ապագայի վերաբերյալ առաջ քաշած իր սկզբունքները քերթողը, բնականաբար, պիտի հիմնավորեր ու հավաստեր Աստվածաշնչի բարձր հեղինակությամբ, ինչպես առհասարակ նման պարագաներում արվում էր միջին դարերում։ Եվ պիտի ասել, որ Ս. գիրքը բանաստեղծին առատորեն ընձեռում էր այդ հնարավորությունը, որից և նա, ի հաստատություն իր մտքերի, քաղվածաբար մեջ է բերում ու տարբեր կոնտեքստերում օգտագործում է իր գաղափարին լավագույնս ղուգահարմարող մտքերը[14]։ «Մատեան ողբերգութեան» պոեմի երկու գլուխներից (Կ և ԿԲ) վերհիշենք Նարեկացու աստվածաշնչային հղումներից մի քանի առավել բնորոշները.—«Խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի», «Սատակէ տէր զշրթունս նենգաւորս և զլեզուս մեծաբանս», «Երեսք տեառն ի վերայ չարագործաց՝ Սատակել զյիշատակս նոցա յերկրէ», «Մի՛ անաւրէնք բնակեսցին առաջի ա-

14 Դրանք հիմնականում քաղված են սաղմոսներից։

չաց քոզ», «Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որ գործէք զանաւրէնութիւն», «Զաոզ ժաղվաղակի սատակեսցին», «Բազուկք ամպարշտաց խորտակեսցին», «Մի՛ ողորմիր գործողացն զանաւրէնութիւն», «Ատեցի զամենայն ճանապարհ չարաց», «Յամենայն ճանապարհէ չարաց արգելի զոտս իմ», «Սատակին անաւրէնք և սեղաւորք ի միասին», «Կործանեսցին անաւրէնք երկրի», «Ամբարիշան բարձցի յերկրէ», «Անիրաւք մերժեսցին ի նմանէ» և այլն, և այլն, մտքեր, որոնք, իրոք, լավագույնս ներդաշնակում են Նարեկացու հումանիստական իդեալին, նրա սոցիալ-հասարակական խոհերին, նրա դավանած պատմափիլիսոփայական ու էթիկական սկզբունքներին։

Այսպիսին են, ահա, Նարեկացու պատկերացումները աշխարհի ու մարդկության ապագայի, նրա պատմական հեռանկարի վերաբերյալ, այսպիսին է ինքը, մարդու և հանրության ճակատագրով խորապես ապրող ու ողջակիզվող մեր աղգային առաջին մեծ բանաստեղծը՝ արտնջացող ու բողոքող, թախանձող ու ողբացող, մերժող ու դատապարտող, բայց միաժամանակ ըղձացող ու երազող, պահանջող ու հաստատող...

Ապագա աշխարհի ու կյանքի մասին Նարեկացու բարձր իդեալը նրա վերածնական հումանիզմի գաղափարաբանության մի փայլուն գրսևորումն է։

Մի հարց ևս։ Կարելի՞ է արդյոք Նարեկացու՝ ապագա աշխարհի իդեալը, նրա պատկերացումները մարդու և մարդկության ապագայի վերաբերյալ բնութագրել որպես վերածնական ուտոպիա։ Թեև նման որակումի համար բավականաչափ հիմքեր չկան, բայց նրա մտքերի ընթացքը պարզորոշ նախանշում է այն ուղին, որ առնում է դեպի վերածնական ուտոպիայի գաղափարը։

МИР И ЕГО БУДУЩЕЕ В ПРЕДСТАВЛЕНИИ ГРИГОРА НАРЕКАЦИ

Член-корр. АН АрмССР В. С. НАЛБАНДЯН

Резюме

Статья посвящена одной из существенных проблем идейного содержания величайшего памятника древнеармянской поэзии—поэмы Григора Нарекаци «Книга скорбных песнопений», вопросу о том, с какой историко-философской точки зрения, с позиций каких эстетических принципов подходил поэт к современной ему действительности и как он представлял себе будущее мира. Анализ богатого фактического материала поэмы раскрывает сущность критического восприятия феодальной действительности Григором Нарекаци. Особого внимания заслуживает то обстоятельство, что поэт, рассматривавший жизнь и будущее человечества с высот своего гуманистического идеала, не довольствовался лишь указанием на отрицательные стороны действительности и их осуждением, но и выдвигал и весьма последовательно отстаивал свой идеал будущего мира—царства добра, красоты и правды, где должны исчезнуть всякое зло и несправедливость. Человек своей эпохи, Нарекаци, естественно, связывал осуществление этой идеи с милосердием и человеколюбием всемогущего бога. Идея будущей жизни по Нарекаци с одной стороны соотносилась с его христианскими убеждениями, с другой же—опиралась на твердую почву его гуманистического мировоззрения.